

25 SEP 2010

ՀՐԱՀԱՆԳ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻՆ

658.8
Հ-94

ԶԱԿԱՆԻԳԱ

14 JUN 2013

658.8
2-94



334.5/023

ՀՐԱՅՐՆԻ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻՆ



3 u. 4 u. v. f. t. h.

26.199

Инструкция приказчику

ЗАКНИГА

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր հասարակական կազմակերպության հաջո-
ղոթյան վրա ազդում են յերկու պայման 1) վճռքան նպատա-
կահարմար կերպով և սահմանած աշխատողների միջև աշխատան-
քի բաժանումը և 2) վճռքան կանոնավոր կերպով են սահմանված
նրանց փոխարաբերությունները:

Սույն հրահանգի մեջ գլխավոր ուշադրությունը գարձ-
ված է պատասխանատու գործակատարի իրավունքների ու պար-
տականությունների վրա, վորովհետև գործնականում սրանց վե-
րաբերմամբ նկատվում են առանձնապես շատ թյուրիմացու-
թյուններ և բարգություններ: Տեղերում հեշտ չի սահմանել աշ-
խատանքի բաժանումը վարչության անդամների և պատասխա-
նատու գործակատարների միջև այնպես, վոր մի կողմից չընսե-
մանան նրանցից վոչ մեկի իրավունքները և մյուս կողմից՝ ապա-
հովի գործի կանոնավոր ընթացքը:

Մինչդեռ, նույն իսկ այս խնդրի կանոնավոր լուծման գեպ-
քում, վարչությանը գեռ ևս մնում են, սպառկոպի գործունեյու-
թյան աշխատացնելու և զարգացնելու վերաբերմամբ, բավական
շատ գործեր և հոգսեր:

Ճիշտ նույնպես պատասխանատու գործակատարին, վորն
ամենից առաջ պետք է լինի հասարակական գործիչ, տրվում է
գործունեյության լայն ասպարեզը, վորտեղ նաև, չվերցնելով իր
վրա իրեն չպատկանող իրավունքները և պարտականությունները,
կարող ե և պետք է յերեան հանրի դեպի իրեն հանձնարած հա-
սարակական գործը կարող և ուշիմ վերաբերմունք: Սույն հրա-
հանգի մեջ բերած պատասխանատու գործմիկատարի իրավունք-
ների ու պարտականությունների, պահմանման շրջանն ստո-
գված է կոռպերատիվ պրակտիկայի յնրկարատե գործով և առանց
խոշոր փոփոխությունների՝ հնարավոր և գործադրել սպառկո-
պում:



Կ 3011-13 928

Թիֆլիս, Ժ. Տ. Բ. Խ. Պոլիգրաֆտրեստի 1-ին տպարան, Պելիանյան պր. № 91.

Պատվեր № 1079:

Տիրաժ 1500.

Գրատես. 1136.

Իսկ ինչ վերաբերում ե սպառկոռազների աշխատողների, այսնքն գարչանդամների և աշխատակիցների փոխարարերություններին, վորավիրք առաջ են գալիս և կախումն ունեն վոչ այնքան այս կամ այն հրահանգներից, վորքան աշխատողների կոռպերատիվ - հասարակական մակարդակից: Յեթե նրանց բոլորի համար՝ սպառկոռապի գործերը դառնում են ընդհանուր գործ, վորով նրանք անմիջականորեն շահագրգռված են, և վորի համար նրանք զգում են համահավասար պատասխանատվություն սպառկոռապի անդամների առաջ, այդ դեպքով՝ կարելի յէ ապահոված համարել՝ ինչպես կանոնավոր փոխարարերությունները, այնպես ել և սպառկոռապի գործունեյության նորմալ զարգացումը:

Հարկավոր ե նշել և այն, վոր սպառկոռապներում վարչության կազմի և ծառայողների փոխարարերությունները չպետք ե լինեն այնպես, ինչպիսիք գոյություն ունեն մասնավոր առետրի ասպարիզում, վորաել համարյա ի նկատի չի առնվում սպառողի շահերը: Սպառկոռապների վարչությունները հաճախ գործ են ունենում այնպիսի ծառայողների հետ, վորոնք լինելով մասնավոր առետրի նախկին աշխատակիցներ՝ յուրացրել են այնպիսի սովորություններ և ձեռք, վորոնք անթույլատրելի յեն կոռպերատիվ կազմակերպությունների մեջ:

Այդպիսի դեպքերում պետք ե հատուկ ուշագրություն դարձնել վարչության և ծառայողների, ծառայողների և սպառկոռապի անդամների կանոնավոր փոխարարերությունների արագ սահմանման վրա:

Սպառկոռապի ծառայողները պետք ե իմանան, վոր խանուրը գոյուրյուն տնի անդամ-սպառողների, յեվ վո՛չ թե սպառապները խանութի համար: Այդ պատճառով ծառայողները պետք ե վերաբերվեն դեպի գնորդներն՝ անկախ նրանց սեփից, հասակից, պաշտոնից և այլն, ընդհանրապես քաղաքավարի, խիստ գործնական և ուշագիր, բայց առանց հաճոյանալու և դատարկաբանության՝ ի վես սպառող գնորդների արագ բավարարելուն:

Սպառկոռապի խանութը վաճառում ե առանց սակարկության, բոլոր անդամների համար միատեսակ գներով: Այդ բանն ել պետք ե յուրացնեն սպառկոռապի ծառայողները:

Մասնավոր առետրը խափում ե գնորդներին կշռի ու չափի մեջ, կոռպերացիայում այդ բանն անհանդուրժելի յէ: Այդ պատճառով սպառկոռապի ծառայողներին անթույլատրելի յէ, մասնավոր առետրականին հատուկ ճարպիկ ու խարդախ արարքները. ինչպես որինակ, կշռոքի վրա ապրանք ձգելը, շատ թղթի փաթաթով ապրանք կշռելը, մետրի վրա կտորի ձգձգելը և նման:

անթույլատրելի բաներ: Սպառկոռապի ծառայողները չպետք ե վաճառեն անպետք ապրանքը լավի, իսկ հասարակ տեսակը՝ բարձրի փոխարեն:

Հարկավոր ե միանգամայն բնական և որինական համարել գնորդի պահանջն՝ ապրանքների կշռի և չափի ստուգման վերաբերյալ, և այդ բանը ծառայողի համար վերավորական չպիտի համարվի:

Ծառայողների մշտական հոգսը պետք ե լինի սպառկոռապի խանութի մաքրությունը և կարգ ու սարքը, պլակատներով նրան զարդարելը և նմանապես իրենց ծառայողների հստակությունը, վորավիր հանգամանքը համարվում ե հասարակական կազմակերպության անհրաժեշտ պայմանը, վոր նպաստում ե ապրանքների պահպանման և գնորդների համար հարմարության և լավ տպագործության ստեղծմանը:

Ցենտրայուղի Կազմբաժին

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԴՐԵԼ „ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՐԱՎԱՆԳՆԵՐԸ“

Ներկա հրահանգները համաձայնեցված են Խորաշենի Ա. Միության կենտկոմի հետ և վորպես որինակելի հրահանգներ առաջարկվում են սպառկոռպաներին:

Խորհրդային Միության մեջ սպառկոռպաները լինում են զանազան տիպի: Այդ պատճառով յուրաքանչյուր սպառկոռպի վարչություն պետք է մտածի փոփոխելու և լրացնելու սույն հրահանգներն այնպես, վոր նրանք համապատասխանեն տեղական առանձնահատուկ պայմաններին: Այսպես որինակ այն սպառկոռպները, վորոնց խանութներում կան գանձապահներ, այդպիսիների վերաբերմամբ հրահանգների 8-րդ գլուխը պետք է վերափոխել և նրանից շատ կետեր գուրս ձգել:

Այն սպառկոռպների վերաբերմամբ, վորոնք չունեն հայթնայթման ու վաճառահանման աշխատանք, այսինքն գյուղատընտեսական մթերքների ու նյութերի մթերումը, այդպիսիների համար հրահանգների 7-րդ գլուխը բոլորովին ավելորդ է:

Բացի դրանից, հրահանգների մեջ բերած մի շարք ցուցմունքները, որինակ ապրանքների ընդունման և գնահատման կարգի և այլ հարցերի վերաբերմամբ, նույնպես պետք է լրացնել կամ փոփոխել համաձայն տեղական առանձնահատուկ պայմաններին: Միայն այս գեպում, պետք է ի նկատի ունենալ և այն, վոր հրահանգի փոփոխումը կամ լրացումը չպետք է խնդրյուր հրահանգների հիմնական կանոնները, վորոնք սահմանում են սպառկոռպի վարչության և պատասխանատու գործակատարի միջև փոփոխարերությունների կարգը:

Սպառկոռպի վարչությունն յենթարկելով սույն հրահանգներն անհրաժեշտ լրացությունների ու փոփոխությունների, վորոնց մասին պայմանագրում ե պատասխանատու գործակատարի հետ, մտցնում և տպած հրահանգների մեջ:

Հրահանգները տպվում են սույն գրքույկի ձևով և 2-ական որինակ ստորագրվում են վարչության և պատասխանատու գործակատարի կողմից: Խսկական որինակը պահպանվում է սպառկոռպի վարչության գործերում, իսկ պատճենը՝ հանձնվում է պատասխանատու գործակատարին:

Հրահանգներն ստորագրելիս բոլոր բաց թողումները (գծիկ-ներով նշանակած ազատ տողերը), թե իսկական և թե պատճենի որինակում, ձեռագրով լրացվում են:

Յեթե հարկավոր կհամարվի ջնջել հրահանգի այս կամ այն կետն ամբողջովին, այդ գեղքում պետք է ջնջվածի մասին գրել հատուկ ծանուցումն՝ հրահանգների վերջում, վարչության ստորագրություններից առաջ հետեւյալ մակագրությամբ. — «Ջնջված հետեւյալ կետի հետեւյալ բառերը չկարդալ» կամ «Ջնջված հետեւյալ կետը չկարդալ»:

Տողերի արանքում գրվածները (ավելացածները) կամ կետերը նմանապես պետք է ծանուցել այսպես. — «տողերի արանքում այս ինչ կետի բառերը կամ գրված այս ինչ կետն՝ արված է մեր կողմից»: Ապա հետեւում են վարչության և պատասխանատու գործակատարի ստորագրությունները: Պատճենի վրա ևս պետք է լինեն նույն ստորագրությունները:

Բացի դրանից, վարչությունն՝ պատասխանատու գործակատարի հետ միասին (տես 6-րդ կ.), պետք է վորոշի ապրանքի պահպանման ու վաճառման գեղքում պատահած բնական պակասի համար արվող զեղջի չափը: Բացի դրանից, զեղջի չափը վորոշելիս՝ պետք է զեկավարվել «Գործակատարի հաշվառումն» կոչվող բրոյցը, վոր հրատարակել և Ցենտրոսոյուզը:

Սահմանված զեղջի չափի մասին պետք է մանրամասն մեկնաբանել հրահանգներին կցած հատուկ հավելվածի մեջ և պետք է ստորագրվի վարչության և պատասխանատու գործակատարի կողմից:

Սույն հրահանգների կիրառման վերաբերյալ բոլոր հարցերի պարզաբանության համար հարկավոր է դիմել՝ Հայկոռպի կազմ-հրահանգչական բաժնին և հարկավոր յեղած գեղքում նաև Ցենտրոսոյուզի կազմ-հրահանգչական բաժնին (Москва, Болышой Черкасский пер. д. № 15):

Յենթրոսոյուզի կազմ-հրահանգչական բաժին

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պատասխանատու գործակատարին (ազգանուն, անուն և հորանուն)

Սպառողական

Ընկերության վարիչին.

I. ԸՆԴՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԸՆՈՂՆԵՐ

1. Քաղաքացի

պաշտոն կատարելու վերաբերմամբ իր պարտականությունների կարգը վորոշում ե սույն հրահանգներով և ի լրացումն սրանց՝ վարչության վորոշումներով ու կանոններով:

Քաղաքացի

պարտագիր և վարչության բոլոր վորոշումները և կանոններն այն մոմենտից, յերբ նրան այդ մասին վարչությունը գրավոր կերպով հայտարարի:

2. Սույն հրահանգների հետագա մեկնաբանության ընթացքում քաղ.

կոչվելու յի պատասխանատու գործակատար և այս հրահանգների համաձայն՝ բոլոր պարտականությունները, վոր գրվում են պատասխանատու գործակատարի վրա, վերաբերում են քաղ.

ին:

3. Պատասխանատու գործակատարն իր պաշտոնն ստանձնելիս՝ ստանում է վարչությունից ցուցակով ապրանքներ, գյուղատնտեսական մթերքներ, նյութեր, ինվենտար, տարան և ուրիշ արժեքներ: Ցուցակում գրվում է յուրաքանչյուր ապրանքի քանակը, գինը և արժեքը, և կազմվում է յերկու որինակը, յուրաքարչյուրն ստորագրում են վարչությունը և պատասխանատու գործակատարը: Ցուցակի մի որինակը տրվում է պատասխանատու գործակատարին, իսկ մյուսը՝ սպառողությի վարչության:

4. Պատասխանատու գործակատարն ընդունում և հաշվում է ապրանքներն ու տարան սպառողությի վարչության կողմից նշանակած վաճառքի գներով իսկ խանութի ինվենտարը և գյուղատնտեսական ու արհեստագործական առարկաներն՝ ըստ քանակի և սպառողությի ինքնարժեքի գների գումարով:

5. Պատասխանատու գործակատարը վերցնում է անձնական սպատասխանատվություն դատարանի առաջ՝ իրեն վրա հաշված բոլոր արժեքների պահպանման ու ամբողջության համար, նաև՝ խանութում գործադրվող սպառողությի փաստաթղթերի պահպանման համար:

6. Ապրանքների պահպանման և վաճառման ժամանակ բնական և անխուսափելի պակասը ծածկելու համար (կշեռքի պակաս, չորացումն, հոսումն, փոշիացումն, քավումն և այլն)՝ պատասխանատու գործակատարին արվում է ապրանքների վաճառքի արժեքից վորոշ զեղջ, իսկ գյուղատնտեսական մթերքների, նյութերի և հում արտադրանքների պահելու և բաց թողնելու ժամանակ արվում է ըստ նրանց կշեռքի վորոշ զեղջ: Զեղջի չափը սահմանվում է վարչության ու պատասխանատու գործակատարի փոխադրձ համաձայնությամբ և ցույց ե տրվում սույն հրահանգներին կցված հավելվածում:

Պատասխանատու գործակատարից զեղջը դուրս ե գրվում ապրանքների, մթերքների և նյութերի պակասորդից, փաստական ստուգումից հետո: Ստուգման ժամանակ յերեան հանաձնավելցուքը գրվում է պատասխանատու գործակատարի հաշվի մուտքում:

Յեթե զեղջը պետք ե սահմանվի յուրաքանչյուր ապրանքի կշռից, այդպիսին դուրս ե գրվում, յերբ գնահատվում է հանձնվում են ապրանքները պատասխանատու գործակատարին:

7. Խմնութի ծառայողներին վարձում է սպառողությի վարչությունը: Պատասխանատու գործակատարին վերապահվում է իրավունք հանգամանքորեն առարկել ծառայողների դեմ՝ ինչպես նրանց հրավիրման դեպքում, այնպես ել նրանց ծառայության

Ժամանակ: Վարչության տվյալ առարկության չհամաձայնվելու դեպքում՝ հարցը փոխադրվում է Բ. Գ. Տեսչությանը:

8. Պատասխանատու գործակատարի հիվանդության կամ արձակուրդի դեպքում՝ նրան կարող է փոխարինել ուրիշ անձ, վարչության համաձայնությամբ: Պատասխանատու գործակատարը պատասխանատու յեր փոխանորդի համար, միայն բացառությամբ այն դեպքերի, յերբ հայտնաբերվում են փոխանորդի բրեկան հանցագործ արարքները: Վերջին դեպքում պատասխանատվությունն ընկնում է փոխանորդի վրա:

9. Պատասխանատու գործակատարը կարող է հեռանալ սպառկոռպից՝ թողնելով պաշտոնը միայն այն դեպքում, յերբ կատարվի նրան հանձնած ապրանքների և ուրիշ արժեքների փաստական ստուգումն և նրանց հանձնումը վարչությանը:

Ապրանքների և այլ արժեքների նման՝ ստուգումը պետք է կատարվի նաև այն դեպքում, յերբ վարչությունը հեռացնելու լինի պատասխանատու գործակատարին:

10. Վարչությունը կարող է հեռացնել պաշտոնից պատասխանատու գործակատարին այն դեպքում, յերբ նա չի կատարել կամ խախտել և սույն հրահանգները կամ սույն հրահանգներում ավելացրած վարչության կանոններն ու կարգադրությունները, նմանապես և այն դեպքում, յերբ յերեան և հանվում ապրանքների, գյուղատնտեսական մթերքների և նյութերի պահպանորդ այն նորմաներից բարձր, վորոնք սահմանվել են պատասխանատու գործակատարի և վարչության փոխադարձ համաձայնությամբ, կամ այն դեպքում, յերբ պակասում է գործակատարին հաշվով հանձնած ինվենտար և ուրիշ արժեքներ:

11. Պատասխանատու գործակատարը՝ պաշտոնից հեռանալու կամ հեռացվելու դեպքում, ապրանքների և ուրիշ արժեքների մնացորդների ստուգումից յերկու շաբաթից վոչ ուշ, պետք է կազմի տեղեկագիր, վորի ճշտումից հետո՝ վարչությունն անմիջապես փակում է գործակատարի հաշվով:

12. Պատասխանատու գործակատարը պարտական է առետուրը կատարել վարչության սահմանած որերին և ժամերին, ճշտությամբ հետևել խանութիւնախարական գրության և առետուրի այլ կանոնների վերաբերյալ իշխանության կարգադրությունների ճիշտ կատարման: Պատասխանատու գործակատարը անձնապես պատասխանատու յե սպառկոռպի վերաբերմամբ պետական մարմինների պարտադիր պահանջների խախտման համար:

13. Պատասխանատու գործակատարը պարտավոր է հետևել իր հսկողության հանձնած խանութիւն և ուրիշ բնակարանների

մաքրության, նաև խանութիւն ծառայողների մաքրության:

Խանութիւն մաքրումը պետք է կատարվի առևտուրից առաջ կամ հետո, միայն այնպես, վոր խանութիւն ծառայողի բանվորական որը 8 ժամից չանցնի:

Առևտուրի ժամանակ խանութիւն հավաքումը թույլատրվում է միայն այն դեպքերում, յերբ այդ հավաքումը չի խանգարի գընորդներին կանոնավոր կերպով ապրանքը բաց թողնելուն: Խանութում պետք է լինի լիացարան իր հարմարություններով և յերեսարքիչ:

14. Սույն հրահանգների մեջ հետագայում հիշվում է սպառկոռպի վարչության ներկայացուցիչը, վորի կարգադրությունները և գործողությունները կապված են պատասխանատու գործակատարի աշխատանքի հետ: Այդ ներկայացուցիչը կարող է լինել այն անձնավորությունը, վորը նշանակված է վարչության կողմից կամ ընտրված և անդամների ընդհանուր կամ լիազորական ժողովի կողմից (որինակ, խանությալին հանձնաժողովի անդամներ, վերաստուգիչ հանձնաժողովի անդամներ, լիազորներ, սպառկոռպի ծառայողներ): Այդպիսի դեպքերում պատասխանատու գործակատարը պարտավոր է յենթարկվել նրանց, վորպես վարչության ներկայացուցիչների, կատարել նրանց կարգադրությունները և նրանց հետ համաձայնեցնել իր աշխատանքը:

II. ԵԳԻԾՆՔՆԵՐԻ ՍՏԵՑՈՒՄԸ

15. Պատասխանատու գործակատարը պետք է ուսումնասիրի տեղական ազգաբնակության կարիքները և հետևի, վոր խանութում լինեն այն բոլոր ապրանքները, վորոնք վարչության վորշած առևտուրական ասսորտմենտի սահմաններում բավարարում են գնորդների պահանջը: Յերբ վորնե ապրանք վերջանալու վրա յե, կամ յերբ պահանջվում է այնպիսի ապրանք, վորը չկա առետուրական ասսորտմենտի մեջ՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է կազմել պահանջի համաձայն ապրանքի պահանջագիր՝ տեղեկացնելով այդ մասին սպառկոռպի վարչությանը: Պատասխանատու գործակատարն իրավունք չունի, առանց վարչության գիտության, անմիջապես մատակարարողներին ապրանքներ պատվիրել:

16. Ապրանքների պահանջագիր կազմելուց առաջ՝ պատասխանատու գործակատարը պետք է ճշտորեն պարզի (հաշվի) կանխիկ մնացորդ ապրանքները և վորոշի, թե վորքան ժամանակ

բավարարելու են նորից դուրս գրած ապրանքները՝ հաշվի առնելով անցյալում վաճառած ապրանքների քանակությունը և սեղոնի պահանջները։ Պատասխանատու գործակատարը պետք է ձգտի այն բանին, վորպեսզի դուրս չգրի տվյալ ժամանակաշրջանի կամ սեղոնի խնկական պահանջնից բարձր կամ ապրանքների պաշարի այն չափոց վեր, որը սահմանել է վարչությունն առանձին ապրանքների համար, վորպեսզի ապրանքների ավելորդ պաշարներով չծանրաբեռնի սպառկոռպի շրջանառության միջոցները և թույլ չտա վոչ-սեղոնային կամ չվաճառող ապրանքների կուտակումը։

III. ԱՊՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՅԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

17. Պատասխանատու գործակատարն ընդունում է խանությերս մտնող բոլոր ապրանքները՝ վորակային ստուգումից հետո, մաքուր քաշով, չափով և հաշվով։ Մաքուր քաշը վորոշվում է կամ տարան կշռելով՝ նրան դատարկելուց հետո, կամ թե չե ըստ տարայի կշռի։ Ազգում է համապատասխան գեղջ, վոր սահմանվում է պատասխանատու գործակատարի և վարչության փոխադարձ համաձայնությամբ։ Ապրանքների վորակի, քանակի, չափի և կշռի վերաբերմամբ յեղած բոլոր թյուրիմացությունները պարզաբանվում են պատասխանատու գործակատարի և վարչության միջև՝ ապրանքների ընդունելու ժամանակ։

Ծանոթություն։ Տարայի կշռը վորոշելիս՝ հանձնարարվում է ղեկավարվել Ցենտրոսոյությի հրատարակած «Գործակատարի համարում» գրքույկում բերված աղյուսակով։

18. Այն ապրանքները, վորոնք ընդունման միջոցին ան պետք են համարված կամ վորոշված և վերադարձնել մատակարարողին, այդպիսիները չեն գնահատվում վաճառքի գներով և հանձնվում են պատասխանատու գործակատարին առ հաշվի (ի պահ) և ապա դուրս են գրում նրա հաշվից առքի արժեքով։

Պակասած ապրանքի համար կազմվում է ակտ՝ պատասխանատու գործակատարի և ընդունման ներկա յեղող վարչության լիազորի ստորագրությամբ։

19. Տարան (տակառներ, արկղներ, թիթեղյա ամաններ, տոպրակներ և այլն), վորպես արժեքավոր իր, ապրանքների ընդունման ժամանակ գնահատվում է, նրա արժեքն ավելացնվում է ապրանքների վաճառքի արժեքի վրա, վորից հետո այդպիսի տա-

րան հանձվում է հաշվով, վորպիս ապրանք, պատասխանատու գործակատարին։

Նմանապես հանձնվում են պատասխանատու գործակատարին թղթապարկերը (կուլ'կի), պերգամենտը, կիսապերգամենտն առ հաշվով, վորպես ապրանք նրանց ինքնարժեքով։

Վարչությունը հաշվում է սպառկոռպի ծախսերի հաշվին թուղթը, թերը և կապիչ նյութերը, միայն այն նորմաների սահմանում, վոր վորոշված և պատասխանատու գործակատարի և վարչության փոխադարձ համաձայնությամբ։

20. Ապառկոռպի վարչության նշանակած վաճառքի գների համաձայն՝ պատասխանատու գործակատարը նշանակում է մատակարարողի հաշվեգրի կամ սրան փոխարինող այլ փաստաթղթի վրա վաճառքի գները, հաշվում է ապրանքների վաճառքի արժեքի ընդհանուր գումարը և տարան ու ապա նրա վրա ստորագրում է ապրանքների և տարայի վաճառքի արժեքի ընդունման մասին։

Վարչության ցուցմունքի համաձայն՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է նշանակել վաճառքի գինը նաև առանձին ապրանքների վրա։

IV. ԱՊՐԵՆՔՆԵՐԻ ՊԵՀՊՈՆԻՄԸ ՅԵՎ ՆՐԵԿ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԸ

21. Ապրանքները պետք է պահել այնպես, վոր նրանք չը փշանան կամ գողացվեն և չխառնվեն ուրիշ ապրանքների հետ։ Ինչ յեթե, հակառակ այդ բանին, այնուամենայնիվ վորեւ ապրանք փշանում է, այդ գեպքում պատասխանատու գործակատարը պարտավոր է այդ մասին խնկույն և եթ տեղեկացնել վարչության կամ նրա նշանակած ներկայացուցչին։

Յեթե պարզվի, վոր այդ փշացումն առաջացել է պատասխանատու գործակատարից անկախ, այդ գեպքում փշացած ապրանքների արժեքը գրվում է սպառկոռպի վասարի հաշվին։

22. Ապրանքները պետք է գասավորված լինեն այնպես, վոր նրանց լավ վորակն աչքի ընկնի գնորդի համար, վոր խանութի ազատ տեղերն այնպես լավ ոգտագործվեն, վոր կարելի լինի հեշտությամբ գտնել յուրաքանչյուր առարկան։

Սուր հոռ ունեցող ապրանքները (նավթ, սապոն, սելյոտկա և այլն) պետք է վորքան հնարավոր և հեռու պահել հեշտ հոռ վերցնող ապրանքներից (թեյ, սուրճ, ալյուր և այլն)։ Խանու-

թում անհրաժեշտ է սարքել յերբ հարմար տեղ կլինի, ապրանք-ների ցուցադիրներ և վիտրինաներ:

23. Փչացած ապրանքների վոչնչացումը և նրանց վաճառքի գների բարձացումը և ցածրացումը կատարում է պատասխանատու գործակատարը՝ վարչության ներկայացուցչի ներկայությամբ: Վոչնչացվող ապրանքների արժեքի գումարը, ինչպես նաև ապրանքների գնահատության բարձրացման ու ցածրացման գումարը, գորշում են վոչնչացման յենթարկվող կամ գները փոփոխվող ապրանքների ստուգման ժամանակ:

Ապրանքների վոչնչացման և նրանց վաճառքի գների բարձրացման կամ ցածրացման վերաբերմամբ կազմվում են արձանագրություններ՝ պատասխանատու գործակատարի և վարչության կողմից ներկայացուցչի ստորագրությամբ: Այս արձանագրությունների համաձայն՝ համապատասխան գումարները գրվում են պատասխանատու գործակատարի հաշվում վորպես ծախս (ապրանքների վոչնչացումն և գների ցածրացումն) կամ գրվում են վորպես մուտք (գների բարձրացումն):

V. ԸՊՐԵՆՔԻ ՎԵՐԱԲՔԸ ՅԵԼՅՔԸ

24. Խանութից ապրանքների ու մթերքների վաճառքը կատարվում է սպառկոռավի վարչության կողմից նշանակած գներով: Վաճառման ժամանակ թափվող ապրանքները կշռվում են թղթապնակների մեջ, իսկ մյուս ապրանքները՝ համապատասխան թղթի մեջ: Ապրանքները բաց են թողնվում ճիշտ կշռով ու չափով:

25. Բոլոր ապրանքները բաց են թողնվում կանխիկ գրամով: Ապրանքները վարկով բաց են թողնվում միայն վարչության թույլտվությամբ, վարչության վորոշած փաստագրերով և նրա կողմից սահմանած վարկի չափով: Պատասխանատու գործակատարի հայեցողությամբ այս կամ այն սպառկոռավներին վարկով վաճառված կամ սահմանած վարկից ավելի բաց թողած ապրանքները հաշվում են վորպես պակասած ապրանք:

26. Պատասխանատու գործակատարը խանութից ապրանք կարող է վերցնել իրեն համար ինչպես կանխիկ, այնպես ել ապառիկ, վարչության սահմանած կանոններով և վորոշած վարկի չափով:

27. Պատասխանատու գործակատարը պարտավոր է գնորդների հետ քաղաքավարի վարկեր ապրանք բաց թողնելիս կանոնավոր հերթ պահել և գնորդներին արագ բավարարելու փո-

խարեն՝ ավելորդ խոսակցությամբ չզբաղվել: Պատասխանատու գործակատարը պարտավոր է նմանապես հնարավորություն տալ գնորդներին կատարելու ապրանքների լավ ու մանրազններին ընտրություն՝ տալով նրանց առաջարկած ապրանքների վորակի մասին կանոնավոր բացատրություններ: Պատասխանատու գործակատարը չափեաք և վիտակցարար վաճառի վատ վորակի և փչացած ապրանքներ:

Պատասխանատու գործակատարը պարտավոր է գնորդների բոլոր հայտարարությունների և գանգատների մասին տեղեկացնել վարչության:

Պատասխանատու գործակատարը (ինչպես և խանութի մյուս ծառայողները) պետք է ապրանք բաց թողնելուց առաջ լվանաներենց ձեռքերը:

28. Խանութից ապրանքներ ուղարկելիս սպառկոռավի բաժանմունք, պահեստ, արտադրական ձեռնարկություն կամ վերադրձնելիս մատակարարողին՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է կազմել առաքման թերթ, վարչության կազմած ձեռք: Նման գեղքերում յետ ուղարկված ապրանքները գրվում են առաքման թերթի մեջ նրանց վաճառքի արժեքով: Յերբ, վարչության պայմանքով առաքման թերթի մեջ հարկավոր է գրել ապրանքի առքի գինը կամ ինքնարժեքը, այդ դեպքում ըստ առաքման թերթի ապրանքի արժեքի և վաճառքի գնի տարբերության գումարի վերաբերմաբ կազմվում է ակտ, վորի հիման վրա տարբերության գումարը գրվում և ծախսերի հաշվին, վորպես գների իջեցումը: Թե՛ առաքման թերթը և թե ակտը ստորագրվում են պատասխանատու գործակատարի և վարչության ներկայացուցչի կողմից:

29. Խանութի կարիքների համար գործադրվում է ապրանք վարչության վորոշած նորմաների չափով:

VI. ԽԵՆՈՒԹՅԱՑԻՆ ՀՅԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30. Պատասխանատու գործակատարը խանութում ստացված ապրանքների հաշվառման համար տանում ե խանութային ապրանքային տեղեկատու:

Տեղեկատուն բաղկացած է յերկու մասից՝ արմատից և պոկվող տալոնից: Տեղեկատուի յերկու մասերի վրա ստորագրում են պատասխանատու գործակատարը և վարչության ներկայացուցիչը:

Պոկած տալոնը և նրա մեջ նշված փաստաթղթերը հանձնվում են սպառկոռպի գրասենյակին՝ վարչության վորոշած ժամկետներին, իսկ արմատը մնում է գրքույկում՝ պատասխանատու գործակատարի մոտ։ Ապրանքների յերեն ամեն որ զրվում է խանությային տեղեկատուի մեջ, իսկ մուտքը՝ յերբ պատասխանատու գործակատարն ընդունում է ապրանք։

Վարչությունը պարտավոր չի ընդունել այն ապրանքների ժամանելու, վորոնց մասին հայտնված ե ուշ, այսինքն այն որից հետո, յերբ ստորագրված ե խանությային տեղեկատուին։

31. Խանությային ապրանքային տեղեկատուն հանդիսանում ե այն հիմնական փաստաթուղթը, վորի հիման վրա կատարվում են պատասխանատու գործակատարի և վարչության փոխադարձ հաշվարկումները։

32. Ապրանքներ բաց թողնելիս՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է կատարել ապրանքների կանխիկ և ապասիկ հաշվառման վերաբերյալ վարչության սահմանած կանոնները։

VII. ԳՅՈՒՂԱՏԵՏԵՍԱԿԵՆ ՑԵՎ ԸՐԳՅՈՒՆԾՐԵՐԵԿԵՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԷՆԴՈՒՆՈՒՄԸ, ԾԸՆՈՒԼԵ ՑԵՎ ՀԱՅԱԲՐՈՒՄԸ

33. Պատասխանատու գործակատարը կարող է ընդունել զընորդներից ու հանձնողներից միայն այն գյուղատնտեսական և արդյունաբերական մթերքները, և այն գեղքերում, վորոնք սահմանվում են սպառկոռպի վարչության կողմից։ Մթերքներ ընդունելիս՝ պատասխանատու գործակատարը պետք է ուշադրություն դարձնի նրանց վորակի և տեսակի վրա և ընդունի միայն այն մթերքները, վորոնք համապատասխանում են վարչության վորոշած պայմաններին։ Ընդունվելիք մթերքների վերաբերմամբ յեղած կասկածի դեպքում՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է այդ մասին տեղեկացնել վարչության ներկայացուցչին և նրա հետ միասին վորոշել տվյալ հարցը։

34. Պատասխանատու գործակատարը լույս ընդունած մըթերքների համար կազմում է անդորրագիր՝ ցույց տալով նրա մեջ մթերքների անունը, տեսակը և վորակը, նրանց գինը և արժեքը։ Անդորրագիրը բաղկացած է յերեք մասից՝ արմատից, կտրոնից և անդորրագրից։ Կտրոն և անդորրագիրը կտրում են գրքույկից, անդորրագիրը արվում է գնորդին կամ մթերք հանձնողին, կտրը ուղարկվում է գրասենյակի, իսկ արմատը թողնվում և գրքույկի մեջ և պահպանվում է պատասխանատու գործակատարի մոտ։ Անդոր-

րագրի յերեք մասերի վրա ստորագրում ե պատասխանատու գործակատարը, իսկ տալոնի վրա ստորագրում ե պատասխանատու գործակատարից բացի, նաև այն անձը, վորից ստացվում են մըթերքները։

35. Յերբ մթերքները ստացվել են բաց թողած ապրանքների փոխարեն կամ ընդունված մթերքների դիմաց բաց և թողնվում ապրանք, այդ գեղքում պատասխանատու գործակատարը պարտավոր է անդորրագրի բոլոր յերեք մասերում զրել, թե մթերքներ հանձնող անձին ինչ գումարի ապրանք ե բաց թողնված։ Հստ վարչության պայմանքի՝ անդորրագրերի գրքույկը կարելի յերբ փոխարինել հատուկ ձևով կազմած տեղեկատուով, վոր այդ գեղքում պետք ե տանի պատասխանատու գործակատարը։

35. Գյուղատնտեսական և արդյունաբերական մթերքների հաշվառումն, ըստ գումարի և ըստ տեսակների, կատարում է սպառկոռպի գրասենյակը՝ համաձայն մտից և յելից փաստաթղթերի, վորոնք ունին պատասխանատու գործակատարի ստորագրությունը։ Այդ փաստաթղթերի հիման վրա յեղած հաշվառման տվյալները պարտադիր են պատասխանատու գործակատարի համար։

36. Պատասխանատու գործակատարն ընդունած ապրանքները կարող ե վաճառել միայն վարչության թույլավությամբ և նրա կողմից սահմանված գներով։

37. Մթերքների վերաբերմբ պատասխանատու գործակատարի համար պարտագիր են սույն հրահանգների 21, 22, 23 և 26 կետերում բացատրված կանոնները։

VIII. ԳՐԱՄՑԿԵՆ ԳԱՐԺԵՐՔՆԵՐԻ ԿԵՏԵՐԹԻՄՆ

38. Յերբ խանութում կա զանձապահ, այդ գեղքում պատասխանատու գործակատարը վնչ մի դրամական զործարք (գրամների ստացումն կամ ծախումն) չի կատարում։

Պատասխանատու գործակատարն այդ գեղքում՝ ապրանքների բաց թողումը կատարում է չեկերով, մարկաներով և նման փաստաթղթերով, վորոնցով հաշվում են խանութի վաճառքի գումարը։

39. Խանութում զանձապահ չեղած գեղքում՝ պատասխանատու գործակատարն ստանում է վաճառված ապրանքագիրները գնորդներից և յուրաքանչյուր որ՝ կամ վարչության միջնորդից, նըշանակված ժամկետներում վարչության ներ-



կայացուցչին, վորը զբամի ստացման համար ստորագրում ե ապլրանքային տեղեկատում մեջ, կամ տալիս ե ստացած գումարի համար պատասխանատու գործակատարին անդորրագիր (մուտքի որդեր):

40. Պատասխանատու գործակատարը կարող է (գանձապահի բացակայության դեպքում) ընդունել կանխիկ դրամական մուծումներ (մուտքի ու բաժնեվճարներ, ավանսներ, պարտքեր, կանխավճարներ, սպառկոռպի անդամների պարտքեր) վարչության հանձնարարությամբ՝ ստացած դրամներն անցկացնելով այդ բանի համար սահմանած որդերային գրքույկների մեջ: Այդպիսի դրամական մուտքերի գումարը հանձնվում է վարչության ներկայացուցչին՝ ստանալով վերջինիս տված որդերների արմատների վրա ստորագրություն:

41. Պատասխանատու գործակատարը կատարում է դրամական ծախսերը՝ յուրաքանչյուր անգամ ստանալով վարչության հատուկ կարգադրությունը և վորոշումը: Պատասխանատու գործակատարը պարտավոր է որվա ընթացքում կատարված բոլոր վճարումների համար վարչության ներկայացուցչին ներկայացնել արդարացուցիչ փաստաթղթերը՝ միևնույն ժամանակ հանձննելով նրան նաև վաճառքի գումարը:

42. Պատասխանատու գործակատարն իրավունք ունի պահանջելու վարչությունից՝ ստանալու իրենից կանխիկ գումարը՝ յերբ այդպիսին.....ո. ավելի յե:

IX. ԻՆՎԵՆՑԻՐԻ ՊԵՀՊԱՆՈՒՄՆԵՐԻ

43. Պատասխանատու գործակատարը նոր ստացող խանությին ինվենտարն ընդունում է առանձին ստորագրությունով: Պատասխանատու գործակատարին հանձնած ինվենտարի հաշիվը տանում է գրասենյակը՝ համաձայն այն փաստաթղթերի, վորոնց վրա կան պատասխանատու գործակատարի ստորագրությունը:

44. Պատասխանատու գործակատարը պարտավոր է նետել խանությում յեղած բոլոր ինվենտարի կանոնավոր վիճակին ու պահպանմանը: Ինվենտարի մաշվելու, փչանալու և կուրքելու դեպքում՝ պատասխանատու գործակատարը պարտավոր է ժամանակին այդ մասին հայտնել վարչության:

Մաշված և կուրքաված ինվենտարի պարագաների մասին կազմը գումարում ե ակտ, վորտեղ ցույց ե տրվում առարկաների անունը, քանակությունն ու արժեքը, և հատադրվում ե պատասխանատու

գործակատարի և վարչության ներկայացուցչի կողմից: Այդ ձևով կազմում են նաև ծախած կամ սպառկոռպի ուրիշ ձեռնարկության ուղարկած ինվենտարի մասին անհրաժեշտ փաստաթղթեր:

45. Պատասխանատու գործակատարն, առանձին գգուշությամբ, պարտավոր է հետեւել կենոքի, կոռաքարերի և չափերի ուղիղ լինելուն. իսկ կը ու չափի անհշտության համար՝ պատասխանատու գործակատարը պատասխանատու յե որենքների ընդհանուր հիմունքներով և այդ բանի համար կարող է նույնիսկ հեռացվել պաշտոնից:

X. ՄՆԱՅԱՅ ԱՊՐԵՆՔՆԵՐԻ ՍՏՈՐԴՈՒՄՆ

46. Ապրանքների, գյուղատնտեսական մթերքների նյութերի ու գույքի և այլ արժեքների ստուգումը կատարվում է պատասխանատու գործակատարի խանութի ընդունման, նրա պաշտոնից հեռանալու կամ նրան հեռացնելու դեպքում և բացի դրանից, վարչության պահանջմամբ՝ տարեկան չորս անգամից վոչ պակաս և պատասխանատու գործակտարի պահանջմամբ՝ տարեկան յերկու անգամից վոչ ավել:

Ստուգումը պետք է կատարվի, ըստ հնարավորության, ազատորերին, յուրաքանչյուր անգամ տեղական Արհմիության համաձայնությամբ, այս դեպքում պատասխանատու գործակատարը չի կարող հրաժարվել ստուգումից՝ պատճառարանելով արտաժամյա աշխատանքը: Ստուգումը կատարելիս առևտուրը պետք է գաղաքացնել և խանութում վճռ վոքի չթողնել՝ բացի ստուգում կատարողներկց:

47. Ստուգման ժամանակ կազմվում է պատասխանատու գործակատարի վրա հաշված բոլոր ապրանքների, մթերքների, նյութերի, գույքի և այլ արժեքների ցուցակը: Ստուգումն ավարտելուց հետո ցուցակի տակ ստորագրում են պատասխանատու գործակատարը և վարչության կողմից նշանակված ներկայացուցիչները:

Յեթե գործակատարը հրաժարվում է ցուցակը ստորագրելուց հենվելով պատում ժամանակ առաջ յեկած սիսաների վրա, այս դեպքում նա պետք է ցույց տա, թե նա ինչո՞ւմն է կասկածում և նրա կարծիքով վերտեղ է սիսալը, վորից հետո պետք է կատարվի յերկորդ ստուգումը (վերահաշվումն): Կատարած հարուցող ապրանքների, մթերքների, նյութերի, գույքի և այլ արժեքների: Այդ ստուգումից հետո՝ պատասխանատու գործակատարի հրա-

Քարվելը ցուցակը ստորագրելուց՝ չի ազատում նրան ստուգման ժամանակ յերևան հանած հետևանքների պատասխանադրվությունից:

48. Պատասխանատու գործակատարին իրավունք ե վերապահվում, հիվանդության կամ այլ հանգամանքների պատճառով՝ ստուգմանն անձնապես չմասնակցելու գեպօւմ, նշանակել իր շահերը պաշտպանելու համար մի այլ անձի: Իսկ յերբ պատասխանատու գործակատարը բոլորովին հրաժարվում է մասնակցելու ապրանքների ստուգմանը, այդ գեպօւմ կազմում են արձանագրություն ծառայողների, տեղիումի ներկայությամբ ու ստորագրությամբ, յերբ այլպիսին գոյություն ունի, կամ լսանութիւյում ծառայողների ներկայությամբ ու ստորագրությամբ: Այդ բանից հետո ստուգումը կատարում ե վարչությունն, առանց պատասխանատու գործակատարի, Վերաստուգիչ Հանձնաժողովի ներկայությամբ, ըստ վորում ստուգման հետևանքները պարտգիր են պատասխանատու գործակատարի համար:

49. Յեթե ապրանքների և այլ արժեքների ստուգումից հետո՝ խանութային տեղեկատուի և մյուս մատյանների մուծումներին հակառակ, յերեան հանվի ապրանքների պահասորը, և յեթե այդ պակասորդը բարձր չի ապրանքների բնական նվազման սահմանված գեղջի տոկոսից, այդ գեղջում տվյալ պակասորդը դուրս և գրվում գորպես ապրանքի ծախք՝ սպառկոռոպի հաշվին:

50. Ψωτσαυխանատու գործակատարը վերցնում է իր վրա պատասխանատվություն սահմանված զեղջի չափից ավելի պակասորդի համար՝ հրահանվի 5-րդ կետում նախավորոշված կարգով:

Սպառկողի Վարչության Նախագահ՝

Վաշնորյան անդամներ՝

Սույն հրահանգը կարդացի, ընդունեցի ի գործադրություն
և հրահանգի պատճենն ստացա.



ՀՀ Ազգային գրադարան



川 8298589

26.199

74

NDL

8M0